ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

22.05.2015թ.
249-ի 4

ՀՀ Ճանապարհային ոստիկանության
պետ պարոն Արսեն Գալստյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գալստյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ենթարկվու՞մ են արդյոք ճանապարհային տեսախցիկները եւ լուսանկարահանող-արագաչափ սարքերը փորձաքննության (ստուգվու՞մ է արդյոք դրանց սարքինությունը),
2. Եթե այո, ապա ի՞նչ պարբերականությամբ,
3. Խնդրում ենք տրամադրել Երեւան քաղաքում տեղադրված ճանապարհային տեսախցիկների եւ լուսանկարահանող-արագաչափ սարքերի ցանկը՝ նշելով յուրաքանչյուրի տեղադրման վայրը եւ վերջին փորձաքննության ժամանակը (ե՞րբ է վերջին անգամ ստուգվել տվյալ տեսախցիկը կամ սարքը):

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան